Հաստատում եմ՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝ Ա.Խաչատրյան
(Պաշտոնի անվանումը, անունը, ազգանունը)

(ստորագրություն)

Արձանագրություն N 2

«ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/45» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման)

ք. Երևան

11 դեկտեմբերի 2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Վ.Վարդապետյան

քարտուղար՝ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ Է.Կարապետյան, Ք.Գևորգյան, Գ.Սիմոնյան, Վ.Մանուկյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. Համակարգչային, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման մրցույթին մասնակցելու հրավերը 2019թ հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումներ կատարելու ԳՀ ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև www.armeps.am էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են 2019 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 10:00-ին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. www.armeps.am կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Բաշինջաղյան 1փ,13/30 Հեռ 091404073
2.	«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ	ք. Երևան, Արա Սարգսյան 10/1 Հեռ. 010399311
3.	«Լանս» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 49, թիվ 6 տարածք Հեռ. 010-23- 05-10
4.	«Պատռոն ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2, Հեռ.01054-43-48, 095 51-99-17

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 «Էյչ Գրուպ» և «Պատռոն ՌՄ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ «ԼանԱր Սերվիս» և «Լանս» ՍՊԸ-ների փաստաթղթերում առկա չեն արտոնագրերի պատճենները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. <Գնումն. գործընթ. կազմ. մասին> թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ մասնավորապես. *Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնահատման հանձնաժողովի նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հաջորդ նիստը տեղի կունենա ք. Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեում, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 9-րդ հարկ 910 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

նախագահ՝ _____ Վ.Վարդապետյան

քարտուղար՝ _____ Գ.Մելիքսետյան

անդամներ՝ _____ Է.Կարապետյան

_____ Ք.Գրիգորյան

_____ Գ. Սիմոնյան

_____ Վ.Մանուկյան